

ՎԱՀԱՆ ՏՈՏՈՄԵԱՆՑ

(60 ամեայ յոբելեանի առթիւ)

Փետրուար ամսին, Բուլղարիայում, տօնեց համագործակցական շարժման յայտնի առաջնալ, միջազգային համաբարձր տեր տնտեսագետ – կօօպերատոր գիտնական Վահան Տոտոմեանցի վաթսուամեայ յոբելեանը:

Հայրը հայ ուսուցիչ, մայրը գերմանուհի՝ Վ. Տոտոմեանցը ծնել է Աստրախան քաղաքում, 1875 թ. փետր. 3-ին: Իր միջնակարգ կրթութիւնը լրացնելով ծննդավայրի պետական գիմնազիայում՝ 1894 թ. մտնում է Յիւրի-իի համալսարանը, ուր հետեւում է տնտեսագիտութեան, փիլիսոփայութեան եւ պատմագիտութեան: Այդ ուսանելով ժընեւի, Բերլինի ու Բրիւսելի համալսարաններում՝ 1898 թ. աւարտում է վերջինիս դասընթացը ընկերային գիտութեանց դոկտորի տիտղոսով: Մասնագիտանում է յատկապէս քաղաքատնտեսութեան եւ կօօպերացիայի մէջ՝ աշակերտելով կամ գործակցելով Բերտրանին, Վանդերվելդին, Շարլ Ժիդին եւ Նշանաւոր տնտեսագետներին: Աշխատակցում է տնտեսագիտական եւ կօօպերատիւ մամուլին: Կարճ ժամանակ Բերլինի համալսարանում դասախօսելուց յետոյ, 1899 թ. հաստատում է Պետերբուրգում, ուր գրադոււմ է տնտեսագիտական գրականութեամբ եւ դասախօսութիւններով: Յայտնի գիտնական պրոֆ. Տուգան – Բարանովսկու հետ աշխատում է «Սկզբունք» թերթում եւ իր արծարծած ազատամիտ գաղափարների համար չորս տարով աքսորւում իր ծննդավայրը՝ Աստրախան:

Աքսորի ժամանակը լրանալուց յետոյ, 1904 թ. Նշանակւում է Պետերբուրգի համալսարանի քաղաքատնտեսութեան եւ կօօպերացիայի դասախօս: 1905-ին շրջում է Ռուսաստանի զանազան քաղաքները՝ դասախօսութիւններ կարդալով կօօպերացիայի մասին: 1907 թ. հաս-

տատում է Մոսկւայում կենտր. կօօպերատիւ Դրամատան վարիչի պաշտօնով եւ դասախօսում է 4 բարձրագոյն դպրոցներում: 1908 թ. կազմակերպում եւ նախագահում է Մոսկւայի կօօպերատիւ համագումարին: 1913 թ. մասնակցում է Միջազգային կօօպերատիւ համագումարին, Կլասկոյում: 1917-ին անցնում է Խալիլա, ուր մնում է մի տարի եւ Լուցատտիի աջակցութեամբ հրատարակում է «կօօպերատիւ շարժումը Ռուսաստանում» իտալերէն հատորը: 1919 թ. հրաւիրւում է դասախօսելու Թիֆլիսի համալսարանում եւ քաղաքաւստեան վարժարանում: 1921 թ., խորհրդայնացումից առաջ, անցնում է արտասահման եւ, իբրեւ պատուակալ անդամ, մասնակցում է Բազելի Միջազգային կօօպերատիւ համագումարին: 1922 թ. հրաւիրւում է դասախօսելու Պրագայի Ռուս. Իրաւաբանական համալսարանում եւ չէիս ու գերման քաղաքագոյն դպրոցներում: 1925 թ. դասախօսում է Բերլինի բարձրագոյն առեւտրական վարժարանում: 1926 թ. նորից հաստատում է Պրագայում, մինչեւ ռուսական համալսարանի փակումը, երբ տեղափոխւում է Բուլղարիա, ուր եւ ապրում է մինչեւ այսօր: 1930 թ. մասնակցում է Վիեննայի Միջազգային կօօպերատիւ համագումարին: Բացի այդ, մանապահորդել է գաւազան երկրներ դասախօսութիւններ կարդալու համար եւ անընդհատ գրել է տնտեսագիտական եւ համագործակցական հրատարակութիւնների մէջ:

Գործնական աշխատանքին զուգընթաց եւ աւելի մեծ քափով՝ Տոտոմեանցը ըզբաղւել է եւ տնտեսագիտութեան ու կօօպերացիայի ուսումնասիրութեամբ եւ գրաւոր բարձր: Նրա գրչի տակից դուրս են եկել բազմաթիւ լրագրական յօդւածներ, հանրամատչելի բարձրական գրքոյկներ եւ գիտական հաստ հա-

տորներ: Նրա գործերը, մօտ 20 լեզուներով, տարածած են աշխարհի բոլոր կողմերը: Զկայ մէկ հատիկ կօօպերատոր, որ ծանօթ չլինի Տոտմեանցի աշխատութիւններին եւ օգտւած չլինի ներանից: Համագործակցական գրականութեան մէջ եզակի տեղ է գրաւում նրա վերջերս լոյս տեսած «Internationale Handwoerterbuch des Genossenschaftwesens» — երկհատոր բառարանը, որ իր շուրջը մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց եւ լայն զգառում ունեցաւ:

Վ. Տոտմեանցի գործը գլխաւորապէս եղել է կօօպերացիայի ժողովրդականացումը, համագործակցական գաղափարների մշակումն ու տարածումը: Նա աւելի քարոզիչ առաքեալ է, քան տեսաբան: Եւ նրա համաշխարհային համբաւը հէնց քարոզչական եւ գործնական — խորհրդատու աշխատանքի մէջ է: Ի

գուր չէ, որ նրան անւանում են կօօպերացիայի առաքեալ: Վ. Տոտմեանցը հետաքրքրւել է եւ հայ միջավայրով, բէե համեմատաբար պատահական կերպով: Դեռ ուսանողական տարիներին Եղիշէ Թովչեանի հետ համագործակցաբար գրաւել եւ գրել է Թիւրքիայի տնտեսական հարցերի մասին: Ցայտնի է նաեւ նրա «Տնտեսական Հայաստանը» փրանսերէն եւ իտալերէն հատորը՝ Լուիջի Լուցցատտիի յառաջաբանով: Վերջին, համաշխարհային ցնցումներն ապրելուց յետոյ, նա իրեն աւելի սկսեց զգալ հայ եւ աւելի մօտեմալ հայ իրականութեան:

«Վէմ»-ը սրտանց միանում է մեծանուն գիտնականին ցոյց տրւած ընդհանուր յարգանքի ու երախտագիտութեան զգացմունքներին նրա յորելեանական հանդէսների առթիւ:

ՍԱՅԵՆԹ ՆՈՎԱՆ ԹՈՒՐԿԵՐԷՆ

«Դրական Թերթ»-ի վերջին (17 ապր.) համարում Գար. Լեւոնեանը հրաւիրում է Հայաստանի լուսծողկոմի ուշադրութիւնը Սայեաթ Նովայի քուրճերէն երգերի հրատարակութեան անհրաժեշտութեան վրա: «Այժմ, գրում է Լեւոնեանը, երբ Թիֆլիսում պրոֆ. Լեւոն Մելիքսեթեանը քարգմանել է աշուղի վրացերէն երգերը հայերէն, ժամանակն է, մենք կարծում ենք, որ Սայեաթ Նովան իր ամբողջութեամբ նամաչելու համար հրատարակութեան տրուին նրա քուրճերէն երգերը եւ ապա նրանց հայերէնն ու վրացերէն քարգմանութիւնները: Մի երկու տարի առաջ Ազրբեջանի լուսծողկոմատը յղացել էր այդ միտքը. նա դիմել էր Երեսան, որ կուտուր պատմական քանգարանում պահուող Սայեաթ Նովայի ձեռագիր Դաւթարից լուսանկարել տրուին բոլոր քուրճերէն խաղերի էջերը եւ ուղարկեն Բագու, այնտեղ խմբագրելու եւ հրատարակելու համար:

Այդ սկզբնական աշխատանքը կատարւեց, սակայն իր նպատակին չհասաւ, որովհետեւ Բագուում դժարացել էին ճշտութեամբ վերածել հայերէն տառերով գրած եւ սղագիր նշաններ ունեցող ձեռագիր խաղերը: Պետք է յիշել, որ մինչ Սայեաթ Նովայի վրացերէն երգերի բիւր 34-ից եւ հայերէն երգերի բիւր 60-ից չի անցնում, քուրճերէն խաղերը 115-ից աւելի են»:

Գ. Լեւոնեանը առաջարկում է՝ «Երեսանում, հմուտ մարդկանց ձեռքով վերածել եւ գրի առնել Սայեաթ Նովայի Դաւթարից նրա բոլոր քուրճերէն երգերը եւ ուղարկել Բագու եւ միաժամանակ մեր Պետերատին յանձնել այդ երգերի հայերէն քարգմանութիւնը, դարձնել կատարած կարող անձնատուրութեան կողմից»:

Իսկապէս որ զարմանալի է, որ մինչև այժմ Սայեաթ Նովայի աւելի քան 150